Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

## ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

## ԳԱՂՂԻՈՅ ՈՒ ԲՐՈՒՍԻՈՅ

2003

Կ. ՊՈԼԻՍ ՎԵԶԻՐԽԱՆ՝
Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. Գ. ԹՕՉԼԵԱՆՑ
)( 1871 )(

891.99
Մ-74

891.99
Ս-74

# ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

# ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

## ԳԱՂՂԻՈՑ ՈՒ ԲՐՈՒՍԻՈՑ

Ահա հասանք Սահմանադրութեան Մետասաներորդ Տարեդարձին
ուզեց գրիչս բան մը գրել՝ գրեց կաւին Եւրոպային.
բաղդը զարմանքի բաներ ըրաւ՝ խելքէ մտքէ դուրս մարդկային.
աղաչեմք բարձրեալն Աստուած՝ հասնիմք հանդիսա 'ի գալ տարին.

Ժամանակ է որ ցնծութեան՝ տի կատարուի օր Տարեդարձ.
Ջնջուեցաւ հին խօսքերն՝ ազգը սիրով է միացած.
Որբազան Պատրիարք Հայրենին ալ՝ հաւաքած է բազում գանձ.
տ'ազատէ ազգը հին պարտքերէն՝ եւ առաւել բամբասանաց.

Մեր արեւելքը իմաստուն է՝ սէր միութիւնը ծաւալեցաւ.
արեւմուտքի լուսաւորեալք՝ սուր սուսերով ջարդուեցաւ.
այժմ արեւելքն է հանդիստ ուրախ՝ արեւմուտքը սխալեցաւ.
արք և կանայք ծերք և տղայք անձով ու գանձով վնասուեցաւ.

Իմաստուն են որդիք մարդիք քան զիմաստուն որդիք լուսոյ.
հարկ է մարդս ալ իմաստութեամբ աշխատելով հասնիլ պատուոյ.
ունին մարդիկ կերպ կերպ բաղդեր՝ ժամանակին կսկսի գալոյ
երբոր կդառնայ մարդս բաղդը՝ հարկ է Աստուծոյ ծառայելոյ.

Բաղդն երբոր կ'սկսի գալ՝ չի նայիր տգէտ ու իմաստութեան
ուրոր ըլլայ վերինք կդառնայ՝ հարկ չէ իւրեանց աշխատութեան.
կուգայ կգտնայ իւրեան տէրը. կձգէ գործերն յաջողութեան
կփարատուին արգելքները, կդառնան չարերը լաւութեան.

Կարգաւ առ կարգ կ'առողջացունէ, փայլիլ կուտայ 'ի մէջ մարդկան
յիմարներն շատ մը իմաստուն կ'ընէ, սէր կձգէ աշխատութեան
բաղդն ու խելքը կմիանան, կդառնան իւրեանց դիւրին ճամբան
շուտով գանձեր կհաւաքեն, տէր կըլլան իշխանութեան.

Տիւ և գիշեր միշտ կխորհին, և կդառնան իմաստուններ
խոհեմութեամբ կընթանան, և կխորհին գաղտնի գործեր
հազար ու մէկ որոգայթներով, կդառնան իւրեանց շատ ընկերներ։
զի այսպէսով մինչեւ անգամ՝ կելլան կըբազմին բարձր գահեր.

Բարձրանալով կը բարձրանան՝ չեն յագենար եղած փառքէն .
անյագելի ագահութեամբ , փառքերնուն մէջ կըսխալին ,
սակայն են որ քիչ սխալեր՝ շատերը միշտ սխալեր են .
թէ մեծամեծք և թէ կայսերք՝ սխալելով շատ լացեր են ։

Բաղդը կըաղմի բարձր տեղ մը , և կիջնէ միշտ փառքերուն
ինքնահաւան ըսուած ախտն ալ , կուգայ մարդուս նոյն կէտերուն
կըսէ ինչու գնացեր ես , չելլաս բազմիս նոյն բարձր տեղոյն
հազար ու վեց օրօգայթով , կհանէ մարդս այն տեղերուն ։

Կհանէ մարդս բարձր տեղն , սակայն մը զինքը ուրախ կընէ
չսեր թէ ես իր բաղդն եմ , կըսէ քուկդ եմ դուն զիս վայելէ
բոլորս քեզի տի ծառայեմք , միայն թէ դուն հրամայէ
քիչ մը մարդս ուրախ կընէ , վերջն ալ սաստիկ կըլացունէ ։

Շատ մեծամեծք եկեր գացեր , նմանապէս ալ մեծ կայսերներ
չեն յագեցեր եղած փառքէն , բայց փառքին են ցանկացեր
իրենանց խելքին են յուսացեր , Աստուծոյ տուածէն չեն գոհացեր
մինչև անգամ Սողոմոնն ալ , սխալելով լացեր ու գացեր

Տուեր է Աստուած իմաստութիւն , հարկէ ըլլամք մենք ալ գիտուն
եթէ ըլլամք քիչ մ'ալ գիտուն , գիտունին պէտք է խոնարհութիւն
զօրհեղք տկարք գեղեցիկ տգեղք , թէ և տգետ կամ իմաստուն
և թէ կայսր և կամ աղքատ , հաւասար կպառկին ի մէջ հողուն

Անքննելի արարիչ Աստուած , ստեղծեր է երկիր ու երկինք
որդիկ մարդիկ խորին մտածեմք , ոչինչ նիւթէ մը գոյացէր ենք
շնչաւորութեամբ մը որ կապրիմք , երբ մեռնինիս որչփոխենք
հողէն եղած հող տի դառնանք , ինչերնուս վրայ սխալ պարծինք

1896 Թուին 60 համարէ բաղկացեալ գիտողութիւն ժամանակի
ճանապարհ երջանկութեան անունով տետրակ մը շինած էի
մէջնալ բոլոր տէրութեանց վրայ գրուած էր կարելի է ընթեր-
ցողաց միտքն է . նոյն տետրակին 17 համարին մէջ Գաղղիոյ և
Նաբոլէոնին վրայ և քսան համարին մէջն ալ Բրուսիոյ վրայ
և քսան ու չորս համարին մէջն ալ փոքր ուրիշ թագաւորնե-
րուն վրայ անարժանութեամբ մը գիտողութիւն մը ըրեր էի
ըստ որում երեք տարի վերջն նոյն գիտողութեան պատուն
աժմուս տալուն համար սոյն տեղն հարկ եղաւ յիշելու եթէ



ընթերցողաց միտքէն ելած է նէ նոյն երեք համարն յիշեցի
ահա ներքոյ ։

Առաջին կայսր Նաբոլէոն , և լուսաւոր մեծ Գաղղիայ
մայրաքաղաքդ Փարիզ կոչուի՝ աշխարհք գիտեն քեզ Գաղղիայ
սակով խելքով և զօրութեամբ , առաջինն ես ով Գաղղիայ
եթէ պարծիս Աստուծով պարծէ , սակամ բաղդէդ քու Գաղղիայ

Կայսերաց մէջ փոքր համարուած , գաղտնի խորհող Բրուսիա
լուսաւորեալ քու Պիզմարքդ , նա մեծցուց քեզ Բրուսիա
ասեղնաւոր հրացանքդ , կայսերքն յարոյց Բրուսիա
իբր կայծակ նոր սուրերուն , պատճառ լինող Բրուսիա ։

Կան շատ ուրիշ թագաւորներ , ապշեր չգիտեն ինչ ընելու
գաղտնի գաղտնի միշտ կխորհին , մէկ մէկ Կայսրերու կապուելու
սակայն սաստիկ պատրաստութենէն , չունին ատեն ակնարկելու
թէ պատահի մեծ կռիւ մը , կամ թագերնուն զրկուելու ։

Մեծ իմաստուն Նաբոլէոնն ալ , բաղդը բազմեցուց Գաղլիոյ գահին
և փայլեցուց իբր արեգակ , միայն ըրաւ մէջ աշխարհին
սակով , խելքով , նաւով , զօրքով , սարսափ տուաւ հողագունդին
կցանկային բոլոր կայսերք , իւր իմաստուն անհաս խելքին

Ինչ հրաման որ կընէր , կայծակի նման կներգործեր
բոլոր խօսքը իբրև պատգամ , իսկոյն շուտով կկատարուէր
երբոր աչքն կակնարկէր , գունդ գունդ զօրքեր կհաւաքուէր
հարիւրաւոր զինեալ նաւեր , ծովեզերքն կպաշարեր

Քսան երկու տարիի չափ , ինքն վայելեց բարձր բառքեր
զարմանալի իմաստութեամբ , կսարսեցուներ մեծ կայսերներ
բոլոր աշխարհիս սարսափ տալու , պատրաստեց նաւեր զօրքեր
որդիկ մարդիկը շուտ կոտրելու հնարեց կերպ կերպ զէնքեր ։

Թագաժառանգ ընելու համար , միշտ կկրթեր Իմփերիալ որդին
Փրաւի շատ աշխատեցաւ , որ բազմել տայ Գաղղիոյ գահին
Պօնաբարդեան բարձր անունը , ձգէ յիշատակ իրեան զարմին
որդւոյ որդի բազմին գահը , չանցնի ուրիշ Գաղլիոյ գահին

Տէրհուրդ մարդկան կամք Աստուծոյ , խնդիր մը ելաւ այն միջոցին
թէ Հոհենցոլերն ազնիւ զարմէն , նաև կայսր Սպանիային
Պիզմարքի գլուխ գաղտնիք մ'էր , նոյն միջոցին հնարեցին

զօրհեղ ու իմաստուն Նաբոլէոնն , այս խնդիրը շուտ մերժեցին
Կիյոմ կայսրը հրաժարեցուց , Հօհենցոլերն նոյն փառքէն
չի յագեցաւ Նաբոլէոնն , միայն խօսքով հրաժարուելէն
վերջի գալիք սարսափ չարին , խնդրեց մարշալ Կիյոմ կայսրէն
բորբոքեցաւ Գերմանիան , սոյն մարշալին խնդիրէն

Նախ Գաղղիոյ բացաւ դուռը պատճառ տուաւ սոյն կռուին
Նաբոլէոնն ալ բարկութեամբ մը , երկիւղ տուաւ Կիյոմ կայսրին
սարսափելի արագութեամբ , ժողուեց զօրքը մէջ շալոնին
հիանալի վեհանձնութեամբ , անցաւ գլուխը մեծ բանակին

Ճամբեց դեսպան Կիյոմ կայսրին , թէ հրամայէ կռուոյ դաշտը
իսկոյն շուտով մի միացան , Գերմանիայի բոլոր ազգը
խոնարհելով դիմաւորեց, խիստ ծերունի Կիյոմ կայսրը
և յուսալով բարձրեալն Աստուծոյ , առաւ զօրքը իջաւ դաշտը

Հարկ եղաւ սոյն տեղը Դաւիթ մարգարէին խօսած անգին
խօսքերն յիշելու

Ի քեզ տէր յուսացայ մի ամաչեցից յաւիտեան արդարու-
թեան քում և փրկեա ապրեցո զիս ,

Համբարցի զաչս իմ ի լերինս ուստի եկեսցէ ինձ օգնութիւն
օգնութիւնինձ ի տեառնէ եկեսցէ որ արար զերկինս և զերկիր ։

Ոչ թէ աղեղն իմ յուսացեալ եմ և ոչ սուրն իմ կեցուցանէ
զիս այլ դու տէր փրկեցեր զմեզ և թշնամեաց մերոց զատե-
լիս մեր ամօթ արարեր ։

Մի ընկենուր զիս տէր ի ժամանակս ծերութեան և ի պա-
կասել ծերութեան իմոյ մի թողուր զիս ։

Բարի է յուսալ ի տէր քան զյուսալ ի մարդիկ բարի է յու-
սալ ի տէր քան յուսալ իշխանս ։

Գերմանացիք ու գաղղիացիք՝ զինուորեցան սուր սուսերով
սկսեցին զիրար ջարդել, աջ և ահեակ չի նայելով
Սթրազպուրկի Մեցի դաշտերը, առ հասարակ լեցց բերթերով
Ներկուեցան արիւններով, ծածկուեցան մեռելներով

Հարիւրաւոր հազարներով, Մառեշալը զօրքերով կռուեցան
վիրաւորուեցաւ Մաքմահոնը , զօրաց բանակը թուլցան
առիւծասիրտ գաղղիացւոց, վառեալ սրտերը մարեցան



բոլոր բանակք մառաշալքով, ինկան գերի ընկղմեցան

Բոլոր աշխարհին սարսափ տուող, մեծ իմաստուն Նաբոլէոնը
կսարսեցունէր այս աշխարհը , ինչ է կըսէր բոլոր կամքը
խոնարհելով ինկաւ գերի , աղաչեց առ Կիյոմ կայսրը
Կիյոմ կայսրն ալ ուրախութեամբ, դրկեց սիրեց իւր հիւր կայսրը

(Դաւիթ մարգարէին անգին խօսքերը չի մոռնանք)

Գուբն զոր փորեաց և պեղեաց ի նոյն անկցի ի խորխորատ զոր
և գործեաց ։

Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց խոնարհ արարին զանձն
իմ փորեցին առաջի իմ խորխորատ և անկեան ինքեանք նոյն։

Դարձին ցաւք ի գլուխ նորա եայլն ։

Չի ոչ թէ իւրով զօրութեամբ զօրանայ հզօր այլ տկար առ-
նէ զհակառակորդս Տէր սուրբ է ։

Ալթուն հալլ իլէ եաղըրն պունու եազան .քէնտի տիւշէր էլ
իչին քույու գազան ։

Բրուսիացիք գերմանիայով, ցնծութիւններով ուրախացին
Նաբոլէոնն ու գաղղիացիք , խիստ տրտմեցան և շատ լացին
Պոնաբարթեանց կայսրութիւնը , կերևի թէ խանգարեցին
չի սիրեր Գաղղիան կայսրութիւնը՝ առժամանակեայ վերջացուցին

Ով իմաստուն Նաբոլէոն՝ աշխարհք կզարմանար քուկին խելքիդ-
կայսերաց մէջ յատուկ էիր, կբաղձէիր բարձր գահիդ-
կսարսէին բոլոր կայսերք՝ պատրաստած նաւիդ զօրքիդ-
տի յաղթեմ ըսիր Գերմանիան , շալոնի մէջ խօսած ճառիդ ։

Հարկը ստիպեց Սաղմոսին անգին խօսքերն կրկին յիշելու

Հզօրաց հաստ աղեղունք թուլացան և տկարք վառեցան զօ-
րութեամբ ։

Մի պարծեսցի խորհրդականն ի խորհուրդս իւր և մի պար-
ծեսցի հզօրն ի զօրութեան իւրում և մի պարծեսցի մեծն ի մե-
ծութեան իւրում այլ որ պարծի ի տէր պարծեսցի ի խոր-
հուրդս գիտութեան զտէր ճանաչէ ։

Աստուծով պարծեցարուք զոր հանապազ և անուն նորա
խոստովան եղերուք յաւիտեան ։

Մի յուսայք յանիրաւութիւն յափշտակութեան մի ցանկայք
և մեծութեան թէ առ ևս գայցէ մի յօժարեսցին սիրտք ձեր ։

Բաղդը բարձրացուց Նաբոլէոնն՝ նման բաբելոնի աշտարակին
Փարիզ քաղաքն ալ իբրև արեգակ, և փայլեցուց մէջն աշխարհին
բաղդը միշտ մարդս կխաբէ, և կհանէ վեր գագաթին
սարսափելի արագութեամբ՝ կձգէ վար կզարնէ գետին

Երբոր կուգայ մարդուս բաղդը՝ տկարները զօրեղ կըլնէ
թէ որ ուզէ զօրեղը ձգել՝ զօրեղն տկարին գերի կըլնէ
բաղդը ունի իշխանութիւն, միշտ իր կամքին ուղածը կըլնէ
չի զարմանամք որդիկ մարդիկ՝ բաղդը այսպէս բաներ կըլնէ

Զգոյշ կենամք չի քնանամք՝ չապաւինիմք մենք բաղդերնուս
և ոչ փառքի և ոչ խելքի, և ոչ ոսկւոյ և արծաթնուս
ըստորումորեկերեն.քաշխարհ.ք.,բաւականապրուստպէտքէմարդուս
բայց չի յուսամք փառքի ոսկւոյ, ապաւինիմք մենք Աստուածնուս

Ահա այսօր բաղդին ըրածը, յայտնի կերևայ մէջ աշխարհին
Նաբոլէոնը բանակներովը, ձգեց գերի Վիլյոմ կայսրին
երբոր կյիշուէր Նաբոլէոնն, բոլոր աշխարհ կսարսէին
այս է կսէին առաջին կայսր, չիկայ ուրիշն մէջ աշխարհին

Ով իմաստուն մեծ գաղղիայ՝ դուք էիք լոյս հողագունդին
կլուսաւորէիք այս աշխարհը, ապաւինեցաք դուք ձեր խելքին
իմաստութեան կեդրոն էիք, բոլոր աշխարհ ձեզ դիմէին
ոսկւով՝ խելքով, նաւով, զօրքով, ծաւալած էիք ի մէջ փառքին

Որդիկ մարդիկ կցանկային կդիմէին լոյս Փարիզին
չէին հագենար աչնի տեսքէն, զարմանալով կզարմանային
այրք և կանայք ծերք և տղայք, ուրախութեամբ կզուարճանային
իբր Նոյի տանին պէս՝ կուտէին կխմէին եայն եայնին

Գաղղիան խափեց այնհատ բաղդը՝ կայսերնին մարէշալքով բրաւգերի
իրեք հարիւր այս քան հազար, զօրքերը յանձնեց Գերման այլ
շատ մեծամեծ քաղաքներն, դարձուց բեր աւերակի
այրք և կանայք ծերք և տղայք, ըրաւ խեղճ ողորմելի ։

Փարիզ քաղաքը սուր սովերով, սարսափելի զինուորեցին



երկուք ու կէս միլեօնով, Փարիզ քաղաք պահպանեցին
զարմանալի վեհանձնութեամբ, բոլոր ցաւերուն համբերեցին
մինչև անգամ մուկև կատու, կերպ կերպ կենդանիկ ճաշակեցին ։

Բոլոր Գաղղիան իր երկիրը, իբր Փարիզ զինուորեցին
ամիսներով ըրին կռիւ, ոչ թուլցան ոչ յաղթեցին
երբոր կորեցին իրենց յոյսը, բոլորը թշնամւոյն յանձնեցին
բաղդը ձգեց մեծ Գաղղիայն, Գերմանացւոց խոնարհեցին ։

Թիւլերի լոյս պալատը, որ կբազմէր Գաղղիոյ բաղդը
ձգեց գնաց Պերլին, քաղաքբազմեցաւ Վիլյոմ Կայսրին գահը
զրկեց բոլոր ուրախութենէն Նորատեղը ձգեց ցաւը
խաւարեցաւ լոյս արեգակ, ունայն եղաւ իրենց ջանքը ։

Իմաստունին ըսածը ըրին, ժամանակը չարժէր լռեցին
Վիլյոմ Կայսրին կամքը եղաւ, զօրքը Փարիզ հրաւիրեցին
տիպլոմաթը տուին վճիռ, հաշտութիւն մը հրատարակեցին
Գաղղիան բռնի խոնարհեցաւ, կրակը մոխրով մը ծածկեցին ։

Բորբոքեալ կրակը ծածկեցին, անշուշտ տեսլար նոր բորբոքնել
չորս կողմերէն կփչեն քամիք, կուզենք հանել նոր կռւներ
բաղդը ձգած է Գաղղիան, իրենց մէջ է թշնամիներ
խորհուրդ մարդկան կամք Աստուծոյ է, Աստուծով կըլլայ ամենբանել

Մոխրով ծածկուած կրակները, կայծ նման բորբոքեցաւ
սկսեցին զիրար ջարդել, լոյս Փարիզը խաւարեցաւ
կամ Թիւլերի և շատ պալատք, հրկիզութեան ճաշակ եղաւ
տեսի զամբարիշտն վերցեալ, Պաւթին խօսքը կատարուեցաւ

Թէ զօրութեամբ իշխանութեամբ, և առաւել հայրենայսիրութեամ
թէ ոսկով կամ արծաթով, և թէ բոլոր իմաստութեամբ
քառասուն միլիոն գաղղիացիք, աշխատեցան վեհանձնութեամ
բարձրեալն Աստուած չյաջողեց, ունայն մնացին անդիտութեամ

Կայսերաց կայսրը արարիչն աստուած, թէոր չօգնէ մէկ կայսերի
թէ միլիոններով զօրք հաւաքէ, և կամ իշխէ այս աշխարհին
կուզէ ըլլայ Նաբոլէօն, և կուզէ նմանի Սողոմոնին
թէ զօրհեղ և թէ գիտուն, ունայնութեամբ կսխալին ։

Թուրքիայի ժողովուրդքս, մեզ ողորմեր է բարձեալն Աստուած
Կայսերնիս է Սուլթան Ազիզը. մենք հանգիստ եմք իրեան հո
աղաչեմք միշտ բարձեալն Աստուածը, որ զօրհեղ պահէ իրեանց ե

միշտ ծառայեմք հաւատարիմ, որ սիրեն մեզ նախարարներ ։

(Քանի մը դիտողութիւններ)

Պունէ հըրս տըր պունէ թամահ, տոյմազ օլտու թամահի ալէմ
պարան կիպի սիմ ու զէր ագայ, թամահի սեօմիւզ օլտու ալէմ
տըշ տէնիզտէ ֆըրթընատայ, չալգանըեօր սէֆինէ ալէմ
տըքըը փոյրազ կիւն տօղուսի, պաթուտան լոտոս էսէր ալէմ ։

Հըրս ու թամահ ալէֆլէնմիշ, ատան գանտան սէօնմէտի ալէմ
խնամի թէզ եօլախնմէյէ, ճէհէննէմ ալէթի եախար ալէմ
շապրոյ լինէլի նէվիճատ թօփլար, գատէր պունլէրտէ չիմտի ալէմ
կունտէն կինէ զանլըր տէօնէր, պիրի պիրինի քըրար ալէմ ։

Շիւքըր խալիմ Թիւրքիայէ, պիզէ մութլու վէրիր ալէմ
Սուլթան Ապտիւլ Ազիզ Շահըմըզ, մէրհամէթլու պիր շահի ալէմ
էկէր օլմասա էսրար ֆէսատ, ճէննէթ կիպի տըր չարքի ալէմ
սարըլալըմ տամէնինէ, տուըրթարըը պիզի Շահըմըզ ալէմ ։

Ինսան պաղլու քըյուն կիպի, գուզու կիպի մէլէր ալէմ
կէճէ կիւնտիւզ տիւշիւնիւր, սաֆ տէրունի ինսանի ալէմ
սիլիլիլըխըն հիւքիւմտարլէր, ամանէթուլլահ տըր սիզտէ ալէմ
արիզ ու ամիք տիւշիւնմէլի քի, սալահանէ տէօնմէյսին ալէմ ։

Ինսան էվլատի տույմազ օլտու, տար կէլիր պունճաալէմ
հէր կիւն զավզա հէր կիւն նիզա, գանը սէվէր օլտու ալէմ
արիֆ օլան գալպ ինճիտմէզ, չիւրիւք տըր տէրլէր փանի ալէմ
հըրս ու շանտան տույմայանլէր, պու տըր տէրլէր ճէննէթ ալէմ ։

Ըշըք աքըլ մէք չօղալտը, եօքի ադըլ գապա ալէմ
ամիք ադըլ ախրէթ եօլու, էէնի ադըլ պաշգա ալէմ
պըրըլմամալը հագ եօլնտան, քօ տէսինլէր գապա ալէմ
խաթէր ըշըք խաթէր գապա, մուսալլաթ կէրէր գալըա ալէմ ։

30 Մայիս 1871

Կ. ՊՈԼԻՍ

ՄԱՀՏԵՍԻ ԳԵՈՐԳ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 60 ՓՐ.

2013

13879